ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 սեպտեմբերի 2026 թվականի N 1387 - Ն

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ M2 ԵՎ M3 ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ԱՆՎԱՎՈՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 877 որոշման 3.2.7-րդ ենթակետի երկրորդ և երրորդ պարբերությունները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը թույլատրել Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ արտադրման օրվանից ոչ ավելի, քան երեք տարի անցած M2 և M3 կատեգորիաների անվավոր տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության մեջ դնելը, եթե տվյալ տրանսպորտային միջոցի համապատասխանությունը հավաստվում է՝

1) «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 018/2011) նախատեսված՝ մինչև սույն որոշման համաձայն տրանսպորտային միջոցը

շրջանառության մեջ դնելն առկա համապատասխանության գնահատման փաստաթղթով, կամ

2) Եվրոպական միության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված ԵՄ տրանսպորտային միջոցի ամբողջական տիպի հաստատման վկայականով (EU Whole-Vehicle Type-Approval Certificate) և տվյալ տրանսպորտային միջոցի՝ հաստատված տիպին համապատասխանությունը հավաստող արտադրողի կողմից տրված համապատասխանության հավաստագրով (Certificate of Conformity, CoC):

2. Մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը սույն որոշման 1-ին կետում նշված տրանսպորտային միջոցների ներմուծումը և շրջանառության մեջ դնելն իրականացվում են առանց այդ տրանսպորտային միջոցներն արտակարգ օպերատիվ ծառայությունների կանչի համակարգերով (սարքվածքներով) համալրելուն ներկայացվող պահանջների կիրառման:

3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերի համաձայն տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության մեջ դնելիս դրա նկատմամբ ՄՄ ՏԿ 018/2011 տեխնիկական կանոնակարգով նախատեսված համապատասխանության գնահատման փաստաթղթեր չեն ձևակերպվում:

4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված տրանսպորտային միջոցների շրջանառությունը թույլատրվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում:

5. Սույն որոշման 1-ին կետում նշված փաստաթղթերը տրանսպորտային միջոցի պետական հաշվառման ժամանակ ընդունվում են որպես սույն որոշմամբ նախատեսված համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր: Պետական հաշվառման համար օրենսդրությամբ նախատեսված մյուս փաստաթղթերը ներկայացվում և մյուս պահանջները կատարվում են ընդհանուր կարգով:

6. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը՝ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերի համաձայն շրջանառության մեջ դրված տրանսպորտային միջոցի պետական հաշվառման ժամանակ տրանսպորտային միջոցների հաշվառման էլեկտրոնային ռեգիստրում ամրագրել սույն որոշման համաձայն տվյալ տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետության

տարածքում շրջանառության մեջ դրված լինելու և դրա նկատմամբ սույն որոշման 4-րդ կետով նախատեսված սահմանափակման վերաբերյալ տեղեկատվությունը:

7. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը՝ ապահովել սույն որոշման 6-րդ կետով նախատեսված տեղեկատվության հասանելիությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերին՝ պետական սահմանի անցման կետերում տրանսպորտային միջոցի նույնականացումը ապահովելու նպատակով:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

24.09.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ